



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Արովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. hsaugb.abovyan.kotayq@mta.gov.am

20-ը դեկտեմբերի 2022թ.

**ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ  
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ**

ՀՀ ազգային անվտանգության մարմինների հարգելի՛ ներկայացուցիչներ. Ի սրտե շնորհավորում եմ ձեզ մասնագիտական օրվա կապակցությամբ: Ձեզ վստահված է ամենապատասխանատու և պատվավոր աշխատանքներից մեկը՝ լինել հայրենիքի անվտանգության, երկրի ներքին կայունության, ժողովրդի բնականոն կյանքի և գործունեության երաշխավորը: Սա մի ոլորտ է, որը պահանջում է աշխատողից ունենալ այնպիսի կարևոր մարդկային որակներ, ինչպիսիք են ուշադրությունը, սկզբունքայնությունն ու հաստատուն կամքը: Հենց այս հատկանիշների և մասնագիտական պրոֆեսիոնալիզմի շնորհիվ տասնամյակներ շարունակ Հայաստանի և Արցախի ազգային անվտանգության ծառայությունների սահմանապահ զորքերը պատշաճ կերպով իրականացրել են հայրենիքի սահմանների պաշտպանությունը. ցավոք, ունեցել նաև նվիրյալ ծառայակիցների կորուստներ:

Այսօր էլ հայ ժողովուրդն ապրում է բախտորոշ ժամանակներ և անվտանգային հարցերում մեծապես ապավինում ուժային կառույցների աշխատանքին: Լիահույս եմ, որ ազգային անվտանգության մարմինների աշխատողների նվիրվածությունն ու մասնագիտական բարձր պատրաստվածությունը կնպաստի Հայաստան և Արցախ աշխարհում անվտանգության ու կայունության հաստատմանը:

Ազգային անվտանգության մարմինների հարգարժան աշխատողներ, կրկին շնորհավորելով, մաղթում եմ ձեզ քաջառողջություն, մասնագիտական առաջընթաց, զգոն և արդյունավետ ծառայություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ